Գործ թիվ ԵԴ2/36705/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

08.11.2023թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով «Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերությունը 02.11.2023թ. հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 20.10.2023թ. թիվ 623-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

03.11.2023թ. հայցադիմումը հանձնվել է Դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեծ Հիմք-1» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 20.10.2023թ. թիվ 623-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**